

**ԹՈՒՐԹ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ՈՒ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (2000-2002 ԹԹ.)**

*Ալեքսանդր Մահակյան
ԵՊՀ արաբագիտության ամբիոն*

1990-ական թթ. և, հատկապես, 90-ական թթ. երկրորդ կեսին թուրք-իսրայելական հարաբերություններն աննախադեպ առաջընթաց գրանցեցին: Երկկողմ համագործակցությունը ներառում էր գերեթե բոլոր բնագավառները, որտեղ առաջնային էր ռազմական ոլորտը: 1996-1999թթ. ընթացքում կնքված միլիարդավոր դոլաների հասնող ռազմական պայմանագրերը, ահակրեկչության դեմ համատեղ պայքարը, Սիրիայի, Իրաքի ու Իրանի նկատմամբ զսպման համատեղ քաղաքականության իրականացումը թուրք-իսրայելական հարաբերություններին հաղորդում էին ռազմավարական համագործակցության բնույթ¹: Սակայն երկկողմ հարաբերությունների զարգացման դինամիկան որոշակի փոփոխություններ կրեց 21-րդ դարի սկզբին՝ պայամանավորված թե՛ տարածաշրջանային, թե՛ Թուրքիայի ներքաղաքական իրադարձություններով:

2000թ. թուրք-իսրայելական հարաբերությունների համար սկսվեց բարեհաջող նոտայով: Հունվարի 17-ին Թուրքիայի ամենահայտնի էստրադային աստղերից մեկը՝ Սեզեն Ակսուն, Թել Ավիվում համերգ տվեց, որին ներկա էր 2700 հանդիսատես²: Սեզենի համերգը Թել Ավիվում խորհրդանշական էր երկու պետությունների միջև մշակութային հարաբերությունների խորացման առումով, և մատնանշեց, որ այդ հարաբերությունները գուտ ռազմական, զենքի կամ առևտրի հարաբերություններ չեն:

¹Inbar E., “Regional Implications of the Israeli-Turkish Strategic Partnership,” *Middle East Review of International Affairs*, Vol. 5, №2, summer 2001, pp. 49-61.

²Olson R., “Turkey’s Relations with Iran, Syria, Israel and Russia, 1991-2000”: *The Kuridsh and Islamist Questions*, California, 2001, p. 161.

2000թ. ընթացքում Թուրքիայի ու Իսրայելի միջև ամեն շաբաթ տեղի էին ունենում մշակութային փոխայցեր³:

Մշակութային կապերին զուգընթաց, ռազմամթերքի ու ջրի վերաբերյալ բանակցությունները շարունակում էին լինել առաջնայինը. ջուրը՝ Իսրայելի, գենքը, միգուցե նաև միջուկային տեխնոլոգիաները՝ Թուրքիայի համար: Հունվարի 29-ին Թուրքիայի զինված ուժերը հայտնեցին իրենց գոհունակությունն Իսրայելի կողմից 54 F-4E ինքնաթիռների արդիականացման կապակցությամբ, որոնցից 26-ը թարմացվել էին Իրայելում, իսկ 28-ը՝ Էսկիշեհիր օդանավերի արտադրական համալիրում՝ իսրայելցի մասնագետների օգնությամբ⁴: 1999թ. հուլիսին Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելի՝ Իսրայել այցից մինչև Իսրայելի վարչապետ Էհուդ Բարաքի հոկտեմբերյան այցը շատ պատվիրակություններ փոխայցեր էին կատարում՝ քննարկելով ջրի խնդիրը: Այս խնդիրը հրատապության էր հասել Մերձավոր Արևելքում 2000թ. ամռանը վրա հասած երաշտի պատճառով: Նշվում էր, որ կողմերի միջև բանակցությունները հիմնականում կապված էին ջրի գնի հետ⁵: Հաղորդվեց, որ Իսրայելը բանակցում էր՝ տարեկան 13.1 միլիարդ գալոն (մոտ 50 միլիարդ լիտր) ջուր գնելու համար, ինչը կազմում էր մոտավորապես տարեկան իր խմելու ջրի պահանջարկի 7 տոկոսը: Ենթադրվում էր, որ սա ամենամեծ քանակությունն էր, որ լցանավով կարող էր առաքվել իսրայելական Աշկելոն նավահանգիստ: Թուրքիան հայտարարեց, որ ինքը կարող է մատակարարել այդ քանակության քառապատիկը, և որ մեկ տարվա ընթացքում ի վիճակի կլինի կրկնապատկել դա⁶:

Իսրայելը, ինչպես նաև արաբական պետությունները, մասնավորապես՝ Հորդանանը, նմանապես մտահոգ էին իրենց

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 162:

⁵ Hurriyet Daily News, “Water talks to resume soon with Israel,” 7/27/2000, <http://www.hurriyetdailynews.com/water-talks-to-resume-soon-with-israel.aspx?pageID=438&n=water-talks-to-resume-soon-with-israel-2000-07-27>

⁶ Նույն տեղում:

խմելու ջրի կապակցությամբ, քանի որ գնալով մեծանում էր կախումը Թուրքիայից: Նրանց անհանգստությունը մեծացավ, երբ Բիլկենթ համալսարանի ջրի փորձագետ Սեյֆի Թաշհանը հայտնեց, որ Թուրքիան երբեք չի կարող ջրով ապահովել ողջ Մերձավոր Արևելքը: «Տարածաշրջանի ջրի խնդիրը շատ ավելի մեծ է, քան Թուրքիայի կամ այլ պետության խնդիրները» - ասաց Թաշհանը⁷: Թուրքիայի՝ Մանավգատ, Մեյհան ու Ջեյհան գետերից ջրի վաճառքն էլ ավելի կմեծացներ Իրաքի ու Սիրիայի մտավախությունը, քանի որ շոշափելի կնվազեր Եփրատի ջրի հոսքը դեպի այդ պետություններ:

Էհուդ Բարաքը 2000թ. օգոստոսի 28-ին նորից այցելեց Թուրքիա՝ իր վերջին այցից ուղիղ 10 ամիս անց: Թեև քննարկման գլխավոր թեման իսրայելապաղեստինյան բանակցությունների կարգավիճակն էր՝ հատկապես Երուսաղեմի ապագա կարգավիճակի հարցը, այնուամենայնիվ, քննարկումների մի մեծ մաս հատկացվեց ջրի քանակին ու գնին, որը Թուրքիան Իսրայելին պետք է վաճառեր Մանավգատ գետից: Մեկ տարվա ընթացքում Իսրայելի վարչապետի երկրորդ այցը ցույց տվեց Թուրքիայի աճող կարևորությունը՝ որպես ջրային ռեսուրսներով հարուստ պետություն և որպես միջնորդ, երբ հարցը վերաբերում է մերձավորարևելյան մեկ կամ ավելի պետության: Փաստորեն, ստացվում էր, որ 1993թ. Պերեսը չէր սխալվել՝ ապագա մերձավորարևելյան կյանքում Թուրքիային որպես ջրի հիմնական «աղբյուր» համարելով⁸: Իսրայելի վարչապետի այցը ցույց տվեց նաև, որ մերձավորարևելյան արաբական գործերում Թուրքիան դառնում էր նույնքան ազդեցիկ, որքան Եգիպտոսը: Իսրայելի կառավարող շրջանակները գիտակցում էին, որ արդեն ժամանակն է եկել հաշվի նստելու Թուրքիայի, ինչպես նաև Եգիպտոսի հետ ու այնպիսի հարցերում, ինչպիսին Երուսաղեմի կարգավիճակի հարցն էր, որը կրոնական, պատմական ու զգայական կարևո-

⁷Նույն տեղում:

⁸PeresS., Naor A., “The New Middle East,” *Middle East Quarterly*, Vol I, №3, Sep. 1994, p. 224.

րություն ուներ նրանց հավատակից եղբայների համար⁹: Թե՛ պաղեստինցի քաղաքական գործիչները, և թե՛ Իսրայելի վերնախավը չէին թաքցնում այն, որ Թուրքիան, իսկապես, կարող էր կողմերի համար որպես հակամարտության խաղաղ կարգավորման միջնորդ հանդես գալ: Այս հարցում սկսել էին մեծ հետաքրքրություն դրսևորել նաև Թուրքիայի քաղաքական շրջանակները¹⁰:

Սակայն ջրի և ռազմական ոլորտներում շատ բանակցություններ անավարտ մնացին, երբ Պաղեստինյան հարցը նորից մեծ ակտուալություն ստացավ: Մեծ արագությամբ զարգացող թուրք-իսրայելական հարաբերությունների առաջընթացը խոչընդոտվեց 2000թ. սեպտեմբերին, երբ Արիել Շարոնն այցելեց Ակսա (Հարամ ալ-Շերիֆ) մզկիթ¹¹: Այն հանգեցրեց պաղեստինցիների կողմից երկրորդ զանգվածային շարժմանը, որը ստացավ «երկրորդ ինթիֆադա» անվանումը: Այս իրադարձությունները մեծ հետք թողեցին թուրք-իսրայելական հարաբերությունների դիվանագիտական մակարդակի զարգացման հետագա ընթացքի վրա: Հասարակական կարծիքի ճնշման արդյունքում Անկարան ստիպված էր հստակ գիծ քաշել Իսրայելի հետ ունեցած իր ռազմավարական շահերի և պաղեստինցիների հետ իր զգայական ինքնության միջև: Մինչդեռ, ի տարբերություն 1987թ. ինթիֆադայի, որը նաև հանգեցրեց ռազմական գործարքների չեղարկման, և որի հետևանքով ռազմավարական հարաբերությունների հաստատումը հետաձգվեց շուրջ մեկ տասնամյակ, երկրորդ ինթիֆադան, առաջին հայացքից, նմանատիպ խնդիրներ չհարուցեց¹², և Թուրքիան չխաբեց Իսրայելի հետ իր կապերը:

⁹ Burris G. A., “Turkey-Israel: Speed Bumps,” *Middle East Quarterly*, Vol. 10, № 4, fall 2003, pp. 67-80. <http://www.meforum.org/569/turkey-israel-speed-bumps>

¹⁰ Interview by Mr. Ahmet Davutoğlu published in AUC Cairo Review (Egypt) on 12 March 2012. <http://www.mfa.gov.tr/interview-by-mr-ahmet-davuto%C4%9Flu-published-in-auc-cairo-review-egypt-on-12-march-2012.en.mfa>

¹¹ Pressman J., “The Second Intifada: Background and Causes of the Israeli-Palestinian Conflict,” *The Journal of Conflict Studies*, 2003, p. 114.

¹² Bengio O., “The Turkish-Israeli relationship: Changing ties of Middle Eastern outsiders”, New York, 2004, p. 157.

Պաշտոնապես Թուրքիան պատշաճ կերպով հիմնավորում էր իր այդ քայլը: Հղում կատարելով տարածաշրջանային զարգացումներին (ինթիֆադային), Թուրքիայի Ազգային պաշտպանության նախարարության փոխարտուղարը (the deputy under-secretary of the National Defense Ministry) հայտարարեց, որ այս իրավիճակը Մերձավոր Արևելքում առկա է 55 տարի և հայտնի չէ, թե երբ կավարտվի¹³: Ճիշտ է, հանրային ու հոետորական մակարդակում Թուրքիայում խիստ քննդատություններ էին հնչում Իսրայելի հասցեին, բայց, կարծես, երկու զուգահեռ ուղղությունները զարգանում էին համընթաց, համաձայն որի՝ երկու դիրքորոշումն էլ գոյակցում էր: Իսրայելի ու պաղեստինցիների հետ իր առանձնահատուկ հարաբերությունների պատճառով Անկարան մեծ ջանքեր էր գործադրում միջնորդի դեր ստանձնել¹⁴:

Պետք է նշել, որ 1990-ական թթ. Օսլոյի համաձայնագիրն էր, որ դռներ բացելու հնարավորություններ ընձեռեց լայնամասշտաբ թուրք-իսրայելական համագործակցություն ձևավորելու համար: Բոլոր նախադրյալներից ու դրդապատճառներից ամենակարևորը հենց արաբաիսրայելական խաղաղության գործընթացն էր, որը հարաբերություններին տվեց տրամաբանական հիմնավորում, և այս պատճառով էր, որ խաղաղության գործընթացում ձգձգված և ապարդյուն ջանքերը կարող էին նորից խոչընդոտ հանդիսանալ երկկողմ հարաբերությունների զարգացման տեսանկյունից: Որոշ թուրք պաշտոնյաներ թուրքական մամուլում գրում էին, որ Իսրայելը 2000թ. նոյեմբերին խնդրել է, որ ԱՄՆ-Թուրքիա-Իսրայել եռակողմ ծովային գորավարժանքը հետաձգվի, անկասկած, որպեսզի չբարդացվի Թուրքիայի գործը Պաղեստինի տարածքում տեղի ունեցող բռնությունների համատեքստում¹⁵:

¹³ “Cesur Yahudiler: İsrail'in Vahşeti Büyük Basımımızda Mümkün Olduğunca Hasır Altı Edilmekte,” Radikal, April 7, 2002

http://www.radikal.com.tr/radikal2/cesur_yahudiler-869031

¹⁴ Bengio O., “The Turkish–Israeli relationship: Changing ties of Middle Eastern outsiders”, New York, 2004, p. 157.

¹⁵ Makovsky A., “Turkish-Israeli Ties in the Context of Israeli-Arab Tension,” *The Washington Institute for Near East Policy*, PolicyWatch №502, November 10, 2000.

Թուրքիայի իշխանություններն անհանգստանում էին, որ նույնիսկ լոկ ինթիֆադայի ցուցադրվող կադրերը կարող էին արթնացնել թուրքերի զգացմունքները, որոնց շուրջ 99 տոկոսը մուսուլման է, որն առաջ կբերեր արմատական տրամադրություններ և իսլամափստներին կառավարության դեմ դուրս գալու պոտենցիալ առիթ կընձեռեր: Այս ամենը Թուրքիայի ղեկավարությանը ստիպում էր մեծ զգուշություն ցուցաբերել Իսրայելի հետ հարաբերություններում: Բացի այդ, առնվազն հարցական էր, թե արդյո՞ք Թուրքիայի արտաքին քաղաքականության չորս գլխավոր կենտրոնների պաշտոնյաները՝ նախագահական, վարչապետական, ԱԳ նախարարություն և զինվորականություն, նախկինի նման համառորեն հակված էին սերտ կապեր պահպանել Իսրայելի հետ, ինչպես որ իրենց անմիջական նախորդողներն էին և ռազմավարական համագործակցության հիմնադիրները¹⁶:

Տարածաշրջանային կտրվածքով դիտարկելու տեսակետից հարկ է նշել, որ, առհասարակ, Իրանում Խաթամիի՝ նախագահ ընտրվելուց հետո բարեփոխումների գործընթացը, որն ամբողջովին անկախ չէր հեղափոխական ոգուց, եկավ առաջնային պլան¹⁷: Սիրիայում ևս, երբ նախագահ դարձավ Բաշար ալ-Ասադը, որոշակի առումներով փոփոխություններ եղան Սիրիայի արտաքին քաղաքականության մեջ¹⁸: Թուրքիայի նախագահ Ահմեթ Նեջդետ Սեզերի՝ Հաֆեզ ալ-Ասադի հուղարկավորության առիթով Սիրիա կատարած այցը¹⁹ շատ առումներով շրջադարձային էր երկկողմ

<http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/turkish-israeli-ties-in-the-context-of-israeli-arab-tension>

¹⁶Նույն տեղում:

¹⁷ Bacik G., “The Limits of an Alliance: Turkish-Israeli Relations Revisited,” ASQ, Vol. 23, №3, summer 2001, pp. 56-57.

¹⁸Kılınc R., “Esad Sonrası Suriye’de Değişim Imkani,” *Stratejik Analiz*, Vol. 1, № 3, 2000, ss. 1-12.

¹⁹ Hürriyet Daily News, “Turkish-Syrian Rapprochement: Causes and Consequences,” 7/14/2002. <http://www.hurriyetdailynews.com/turkish-syrian-rapprochement-causes-and-consequences.aspx?pageID=438&n=turkish-syrian-rapprochement-causes-and-consequences-2002-07-14>

հարաբերություններում, իսկ արդեն 2000թ. նոյեմբերին Սիրիայի փոխնախագահ Աբդուլհալիմ Խադդամի այցը Թուրքիա մատնանշում էր թուրք-սիրիական հարաբերությունների աստիճական բարելավման փաստը²⁰: Թուրքիան այդ շրջանում պետք է հաշվի առներ, որ նախկին իրադրությունը՝ կապված իր հարևանների հետ երկկողմ հարաբերությունների հետ, որոշակիորեն փոխվել էր: Քանի դեռ այս սահմանափակ փոփոխությունները տարածաշրջանում ստեղծում էին նոր իմպուլս, հարևան պետությունների դրական քայլերը ևս կնպաստեին Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավմանը: Մերձավոր Արևելքում բարեփոխումների այս ֆոնի վրա Սիրիային ու Իրանին նախկինի նման զսպելու անհրաժեշտությունը կարծես թե արդեն անտրամաբանական էր²¹:

Ճիշտ է, թեև Թուրքիան շարունակում էր զգուշություն ցուցաբերել Սիրիայի հարցում, որի հետ տարիներ շարունակ ունեցել է տարածքային և ջրային խնդիրներ, սակայն Անկարան Դամասկոսից այլևս չէր նկատում անմիջական և լուրջ սպառնալիք²²: Նույնիսկ նախատեսվում էին ավելի բարձրաստիճան պաշտոնյաների փոխայցեր Թուրքիա և, համապատասխաբանաբար, Սիրիա²³:

Անկարայի տեսանկյունից, Դամասկոսի հետ բարելավվող հարաբերությունները և, հետևաբար, ազգային անվտանգության սպառնալիքի նվազեցումն ի դեմս քրդական շարժմանը ցուցաբերվող օգնությանը, որոշակի առումով նվազեցնում էին Իսրայելի հետ սերտ կապերը խորացնելու հրատապությունը: Այս տեսա-

²⁰ Hürriyet Daily News, “Syria's Khaddam to visit Turkey to boost ties,” 11/2/2000, <http://www.hurriyetdailynews.com/syrias-khaddam-to-visit-turkey-to-boost-ties.aspx?pageID=438&n=syrias-khaddam-to-visit-turkey-to-boost-ties-2000-11-02>

²¹ Bacik G., “The Limits of an Alliance: Turkish-Israeli Relations Revisited,” ASQ, Vol. 23, №3, summer 2001, pp. 56-57.

²² Mufti M., “Turkish-Syrian Rapprochement: Causes and Consequences,” *The Washington Institute for Near Policy*, PolicyWatch № 630, June 21, 2002. <http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/turkish-syrian-rapprochement-causes-and-consequences>

²³ Kılınç R., “Esad Sonrası Suriye’de Değişim Imkani,” *Stratejik Analiz*, Vol. 1, № 3, 2000, ss. 1-12.

կետը մասամբ հիմնավորում է 2000թ. սեպտեմբերին Թուրքիայի կողմից Իսրայելի հետ երկու ռազմական պայմանագրերի չեղարկման որոշումը (տանկերի արդիականացման ու հետախուզական արբանյակների վերաբերյալ)²⁴, ինչը Թուրքիան, ըստ տարածված լուրերի, պատրաստվում էր հանձնել իսրայելական ընկերությունների: Ֆրանսիայի և ԱՄՆ-ի միջամտությունը՝ ընդլայնել այդ պայմանագրերի մրցակցային աճուրդը, ըստ երևույթին, վճռորոշ էր Անկարայի որոշման հարցում: Սակայն, եթե Միլիտարում հաստատված PKK-ն նախկինի նման շարունակեր անհանգստացնել Թուրքիային, ապա ամենայն հավանականությամբ, հենց Իսրայելը կստանձներ պայմանագրերի իրագործումը՝ անկախ ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի ներգրավվածությունից²⁵:

Առհասարակ, 2000թ. ողջ ընթացքում Անկարան Իսրայելի հետ համագործակցության առումով սկսել էր որոշակի ու արտասովոր դժկամություն ցուցաբերել: Հնարավոր է, որ այդ երևույթը կապված էր նաև Թուրքիայում նախագահական ընտրությունների, ինչպես նաև, անկասկած, պաղեստինցիների նկատմամբ Իսրայելի կոշտ քաղաքականության հետ: Դա հստակ ընդգծվեց, երբ Թուրքիան 2000թ. հուլիսին մերժեց իսրայելական IAI և ռուսական “Kamov-A” ընկերությունների՝ Թուրքիային 145 միավոր Ka-50/52 հարձակողական ուղղաթիռներ վաճառելու առաջարկը²⁶: Ամերիկյան “Bell Textron” ընկերությունն առաջ անցավ բոլորից ու սկսեց բանակցություններ վարել 4.5 միլիարդ դոլարանոց պայմանագրի համար²⁷: Միննույն ժամանակ, Թուր-

²⁴Olson R., “Turkey’s Relations with Iran, Syria, Israel and Russia, 1991-2000”: The Kuridsh and Islamist Questions, California, 2001, p. 163.

²⁵Makovsky A., “Turkish-Israeli Ties in the Context of Israeli-Arab Tension,” *The Washington Institute for Near East Policy*, PolicyWatch №502, November 10, 2000. <http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/turkish-israeli-ties-in-the-context-of-israeli-arab-tension>

²⁶Марьясис Д. А., “ВПК Израила на рубеже веков,” *Востоковедный сборник. Вып.3* // Отв. ред. Федорченко А.В., Филоник А. О. ИИИБВ: Москва 2002, с.230-238.

²⁷Hürriyet Daily News, “Attack helicopter tender expected to be finalized today,” 7/21/2000. <http://www.hurriyetdailynews.com/attack-helicopter-tender-expected-to-be->

քիան որոշում էր կայացրել իսրայելական ՕԲԷԿ լրտես-արքայական չգնելու վերաբերյալ: 2000թ. օգոստոսի վերջին Թուրքիան հայտարարեց, որ ինքը կընդունի Ֆրանսիական «Ալկատել» ընկերության առաջարկը՝ արքայական կառուցել 204 միլիոն դոլարով՝ IAI-ի առաջարկած գնից 70 միլիոն դոլար քիչ արժեքով²⁸: Միննույն ժամանակ, 2000թ. տեղի չունեցավ արդեն ավանդույթ դարձած «Վստահ չչակ» ամենամյա եռակողմ ծովային զորավարժությունը: Բացի այդ, արաբական աղբյուրները հաղորդում էին, որ 2000թ. ամռանն ավելի քան 400 թուրք սպաներ ուղերձ ստորագրեցին, որը կոչ էր անում խզել հարաբերությունները Թուրքիայի ու Իսրայելի միջև, իսկ մյուս կողմից՝ խորացնել հարաբերություններն արաբական պետությունների հետ²⁹: Այս բոլորը խոսուն փաստեր էին այն մասին, որ տարածաշրջանային իրադրությունը որոշակի առումով բացասական էր անդրադառնում Թուրքիայի ու Իսրայելի միջև կապերի վրա:

Այս ամենով հանդերձ, Թուրքիայի զինվորական ղեկավարությունը դժկամությամբ էր ընդունում Իսրայելի հետ կապերի մասնակի սառեցումը, որն իր ռազմամթերքի ու հետախուզական տվյալների գլխավոր մատակարան էր, ինչպես նաև տարածաշրջանային առաջատար արտահանման շուկան: Թուրքիան հնարավորինս փորձում էր պահպանել Իսրայելի հետ գործակցային սերտ կապերը: 2000թ. աշնանը Թուրքիան հայտարարեց, որ ստիպել է Սիրիա ուղևորվող մի իրանական քաղաքացիական ինքնաթիռի վայրէջք կատարել Թուրքիայում, ապա նոր շարունակել երթուղին, որպեսզի համոզվի՝ արդյոք ինքնաթիռը զինամթերք չի տեղափոխում Լիբանան՝ Հիզբոլլահի համար³⁰: Այն փաստը, որ Թուրքիան

finalized-today.aspx?pageID=438&n=attack-helicopter-tender-expected-to-be-finalized-today-2000-07-21

²⁸Olson R., “Turkey’s Relations with Iran, Syria, Israel and Russia, 1991-2000”: The Kuridsh and Islamist Questions, California, 2001, p. 163.

²⁹10/7/2000, استندعاء ضباط التركية لمقاطعة العلاقات مع إسرائيل - إسرائيل، السياسة، <http://www.arabicnews.com/ansub/Daily/Day/001007/2000100707.html>

³⁰ Makovsky A., “Turkish-Israeli Ties in the Context of Israeli-Arab Tension,” *The Washington Institute for Near East Policy*, PolicyWatch №502, November 10, 2000.

մեծ ջանքեր էր գործադրում Իրանի կողմից Հիզբուլլահին տրամադրվող օգնությունը կասեցնելու հարցում, վկայում էր Թուրքիայի կողմից Իսրայելին տրվող նախապատվության մասին:

2001թ. թուրք-իսրայելական համագործակցության համար ավելի բարեհաջող տարի էր: Քանի դեռ թուրք-իսրայելական հարաբերությունների դիվանագիտական մակարդակում 2000-ական թթ. սկզբին նկատվում էր որոշակի սառեցում՝ կապված Պաղեստինի հարցում Իսրայելի վարած կոշտ քաղաքականության հետ, ապա որոշ բացառություններով ռազմական և, հատկապես, տնտեսական կապերը շարունակում էին ընթանալ նույն հունով: Նախ 2001թ. հունվարին, ապա նաև դեկտեմբերին Միջերկրական ծովում անցկացվեց «Վստահ շչակ» գորավարժությունը³¹: Հունիսին օդային ուժերը Թուրքիայի Քոնիա նահանգում իրականացրին «Անատոլյան արծիվ» (Anadolu Kartalı) համատեղ գորավարժությունը³²: 2001 թ. օգոստոսին Արիել Շարոնը պաշտոնական այց կատարեց Թուրքիա: Այցի ընթացքում կնքվեց համաձայնագիր, որով նախատեսվում էր համատեղ արտադրել Arrow-2 հակահրթիռային համակարգ: Նույն տարում Թուրքիայի բանակին պատկանող շուրջ 900 տանկերի արդիականացման նախագիծը հանձնվեց իսրայելական “IMI” ընկերությանը³³: Այս շրջանում երկու պետությունները մեծապես աջակցում էին ԱՄՆ-ին ահաբեկչության դեմ գլոբալ պատերազմում, որի թիրախն իսլամիստ արմատականներն էին: Այս էր պատճառը, որ 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո որոշակի դրական տեղաշրջում եղավ թուրք-իսրայելական ռազմավարական հարաբերություններում,

<http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/turkish-israeli-ties-in-the-context-of-israeli-arab-tension>

³¹ “Timeline of Turkish-Israeli Relations, 1949-2006,” *The Washington Institute for Near Policy*, <https://app.box.com/shared/8r04vks4li>

³² Yılmaz E., M., “Soğuk Savaş sonrası dönemde Türkiye-İsrail ilişkilerini,” *Akademik Orta Doğu*, Cilt 4, Sayı 2, 2010, s. 167-168.

³³ “Timeline of Turkish-Israeli Relations, 1949-2006,” *The Washington Institute for Near Policy*, <https://app.box.com/shared/8r04vks4li>

քանի որ երկու պետությունն էլ առերեսվում էին ահաբեկչության խնդրին³⁴:

2002թ. մարտին Թուրքիան Իսրայելի հետ ստորագրեց 668 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ գաղտնի պայմանագիր, որով նախատեսվում էր, որ իսրայելական “IMI” ընկերությունը պետք է արդիականացներ 170 միավոր թուրքական M-60A1 տանկ³⁵: Թուրքիայի պաշտպանության նախարարը հայտարարեց, որ սա առևտրական ու ռազմական որոշում է, այլ ոչ քաղաքական³⁶: Չնայած, որ այդ պայմանագիրը կնքվեց 2002թ., դրա իրականացումը տարբեր պատճառներով (Թուրքիայում ֆինանսական խնդիրներ և կառավարության փոփոխություն, երկկողմ հարաբերությունների ընդհանուր սառեցում) ձգձգվում էր: Միայն 2005 թ. վերջին իսրայելական ինժեներները ձեռնամուխ եղան թուրքական բանակի տանկային պարկի արդիա-կանացմանը³⁷: 2002թ. հուլիսին Թուրքիայի օդային ուժերին պատկանող 300 ուղղաթիռներ արդիականացման նպատակով նույնպես հանձնվեցին “IMI” ընկերությանը: 2002թ. օգոստոսին Թուրքիան ու Իսրայելը ստորագրեցին շուրջ 1 միլիարդ ԱՄՆ դոլարի արժողության պայմանագիր՝ Թուրքիայի Մանավգատ գետի ջուրը Իսրայել ներկրելու կապակցությամբ³⁸:

Առևտրային հարաբերությունները նոր դարաշրջանի սկզբին նույնպես նշմարելի զարգացան: Եթե 1993թ. տնտեսական գործարքների ծավալը մոտ 137 միլիոն ԱՄՆ դոլար էր, իսկ 1999-ին՝

³⁴Inbar E. “The Resilience of Israeli-Turkish Relations,” *Israel Affairs*, Vol. 11, № 4, October 2005, pp. 594-595.

³⁵Jane’s Defense Weekly, 10 April 2002, p. 4.

³⁶Hürriyet Daily News, “Tank modernization contract with Israel not political,” 3/14/2002, <http://www.hurriyetdailynews.com/tank-modernization-contract-with-israel-not-political.aspx?pageID=438&n=tank-modernization-contract-with-israel-not-political-2002-03-14>

³⁷Մինասյան Ս., «Իսրայելա-թուրքական ռազմավարական համագործակցության ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրների վրա», «21-րդ ԴԱԸ» N 2, 2004, էջ 13:

³⁸“Timeline of Turkish-Israeli Relations, 1949-2006,” *The Washington Institute for Near Policy*, <https://app.box.com/shared/8r04vks4li>

891 մլն. ԱՄՆ դոլար, ապա այդ թիվը 2007-ին հասավ 1միլիարդ ԱՄՆ դոլարի³⁹: Երկկողմ առևտուրը, որը 1987թ. կազմում էր շուրջ 54 միլիոն ԱՄՆ դոլար, 2004-ին հասավ մինչև 2 միլիարդ ԱՄՆ դոլարի՝ չհաշված գենքի վաճառքը: Այս բուսը երկու պետություններում էլ ի հայտ բերեց բիզնես լոբբիներ, որոնք երկկողմ հարաբերությունների ջատագովն էին: Զբոսաշրջությունը ևս նպաստեց կապերի ամրապնդմանը: 1990 և 2004 թթ. ընթացքում ընդհանուրը 3.298.000 ⁴⁰ իսրայելցի զբոսաշրջիկներ են այցելել Թուրքիա՝ ծախսելով շուրջ 2.4 միլիարդ ամերիկյան դոլար⁴¹:

Այսպիսով, թեև երկկողմ հարաբերությունները որոշ բնագավառներում այդքան կորուստներ չէին կրել, 21-րդ դարի սկզբին թուրք-իսրայելական հարաբերությունների դինամիկան ամբողջովին հիշեցնում էր հարաբերությունների ընթացքը 1949-1990-ական թթ.: Թուրքիայի քաղաքական շրջանականները բացահայտորեն քննադատում էին Իսրայելին, սակայն համագործակցությունը շարունակվում էր, մասնավորապես՝ ռազմական և ռազմատեխնիկական ոլորտում, և հատկանշական է, որ 21-րդ դարի սկզբին Թուրքիան նախկինի նման սկսել էր թաքցնել Իսրայելի հետ ռազմական համագործակցության բնագավառում կնքվող պայմանագրերը: Սա արդեն իսկ խոսում վկայություն էր այն մասին, որ հարաբերությունների մակարդակն իջել էր՝ համեմատած 1990-ական թթ. երկրորդ կեսի հետ, երբ Անկարա-ԹելԱվիվ կապերի և ոչ մի ոլորտ քողարկված չէր: 2002թ. ապրիլին Թուրքիայում Ա. Շարոնի քաղաքականությունը պաղեստինցիների նկատմամբ բնորոշվում էր ցեղասպանություն ⁴², իսկ այդ նույն

³⁹Yılmaz E., M., “Soğuk Savaş sonrası dönemde Türkiye-İsrail ilişkilerini,” Akademik Orta Doğu, Cilt 4, Sayı 2, 2010, s. 167-168.

⁴⁰Մեծ թիվ է՝ հաշվի առնելով, որ Իսրայելի բնակչությունը 7 միլիոն էր:

⁴¹Cagaptay S., “The Turkish Prime Minister Visits Israel: Whither Turkish-Israeli Relations?” *The Washington Institute for Near East Policy*, Policy Watch №987, April 27, 2005. <http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/the-turkish-prime-minister-visits-israel-whither-turkish-israeli-relations>

⁴²“Timeline of Turkish-Israeli Relations, 1949-2006,” *The Washington Institute for Near East Policy*, <https://app.box.com/shared/8r04vks4li>

ամսում հայտարարվեց, որ Իսրայելը չի մասնակցի ԱՄՆ-ի ու Թուրքիայի միջև համատեղ զորավարժությանը⁴³: Այստեղ հիմնական գործոնն, անշուշտ, պաղեստինյան հարցի սրումն էր, բացի այդ, նախկինի նման Թուրքիան չուներ արդարացում տարածաշրջանային պետություններին զսպելու առումով, քանի որ այս շրջանում դրա կարիքը պարզապես չկար:

Թուրք-իսրայելական հարաբերությունների համար մեծ հարված էր 2002թ. վերջին «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) հաղթանակը խորհրդանարանական ընտրություններում, թեև կուսակցության առաջնորդ Ռեջեփ Թայիփ Էրդոդանը խոստացավ պահպանել Թուրքիայի արևմտամետ քաղաքական կողմնորոշումը⁴⁴:

Թեև ԱԶԿ-ն իր կոչերում «Բարօրություն» կուսակցության նման կոշտ չէր Իսրայելի հանդեպ, այնուհանդերձ, կուսակցության շատ առաջնորդներ չէին թաքցնում իրենց քննադատությունը Իսրայելի քաղաքականության հանդեպ⁴⁵: ԱԶԿ-ից բխող իրական սպառնալիքն այն էր, որ Էրդոդանի արևմտամետ հակումները ոչ հաճախ էին համընկնում կուսակցության շատ անդամների դիրքորոշման հետ: Այս երևույթը վառ դրսևորվեց 2003թ. իրաքյան դեպքերի ընթացքում, երբ Թուրքիայի խորհրդարանը հրաժարվեց ԱՄՆ զորքերին տրամադրել Թուրքիայի տարածքը Իրաքի վրա հարձակումներ իրականացնելու համար, և Էրդոդանը, առնվազն բացահայտ կերպով, չքննադատեց իր գործընկերների որոշումը:

⁴³ Hürriyet Daily News, “Turkey denies plans for military exercises with Israel,” 4/4/2002, <http://www.hurriyetdailynews.com/turkey-denies-plans-for-military-exercises-with-israel.aspx?pageID=438&n=turkey-denies-plans-for-military-exercises-with-israel-2002-04-04>

⁴⁴ Hürriyet Daily News, “Erdogan says his country will maintain ties with Israel,” 11/15/2002, <http://www.hurriyetdailynews.com/erdogan-says-his-country-will-maintain-ties-with-israel.aspx?pageID=438&n=erdogan-says-his-country-will-maintain-ties-with-israel-2002-11-15>

⁴⁵ Hürriyet Daily News, “Israel strongly concerned for Turkish elections results,” 11/2/2002, <http://www.hurriyetdailynews.com/israel-strongly-concerned-for-turkish-elections-results.aspx?pageID=438&n=israel-strongly-concerned-for-turkish-elections-results-2002-11-02>

Եթե հակախարայելական տրամադրությունները, որոնք շատ հաճախ դրսևորվում էին իսլամիստ ուժերի կողմից, ինչ-որ կերպ վճռորոշ դեր ունենաին Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա, ապա հարաբերություններն Իսրայելի հետ, անկասկած, կարող էին վատանալ, և այս պարագայում վատագույն իրադրությունը երկկողմ հարաբերություններում կընթանար այն նույն կերպ, ինչ եղավ Իսրայելի ու Իրանի պարագայում 1979թ.-ից սկսած, երբ նախկին ջերմ հարաբերությունները վերածվեցին թշնականան հակակրանքի⁴⁶:

ԱԶԿ-ն իշխանության գալուց հետո հայտարարեց, որ Թուրքիայի արտաքին քաղաքական գերակայությունը մնալու է ԵՄ-ին լիիրավ անդամակցությունը⁴⁷: Օրենսդրական դաշտի բարեփոխումներով զգալիորեն նվազեցվեց բանակի՝ հասարակական-քաղաքական գործընթացներին միջամտելու հնարավորությունը: Սակայն սրանք արվեցին բավական ճկուն և սահուն: Հետագայում Թուրքիայի խորհրդարանը մի շարք փոփոխություններ իրականացրեց՝ սահմանափակելով Ազգային անվտանգության խորհրդի նախկին հզորությունը, որը հանդիսանում էր զինվորականության գլխավոր լծակը քաղաքականության մեջ: Այդ ամենն իրականացվեց ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործընթացի շրջանակներում: Հայտնի է, որ հատկապես Թուրքիայի զինվորականությունն էր (սկսած 1990-ական թթ.) հանդիսացել թուրք-իսրայելական հարաբերությունների զարգացման գաղափարախոսը և ջատագովը: Ուստի, Թուրքիայի քաղաքական կյանքում, զինվորական վերնախավի դիրքերի հետագա թուլացման պարագայում, Իսրայելի հետ հարաբերությունների խորաց-

⁴⁶ Burriss G. A., “The Middle East-Turkey and Israel: The Turkish-Israeli Entente and Potential Mines in Its Path,” *An Online Journal of Political Commentary and Analysis*, Vol. 5, № 288, November 29, 2003.

<http://www.proconservative.net/pcvol5is288burrsturkeyisraelmeq.shtml>

⁴⁷ Հովսեփյան Լ., «Էրզնեկոնի գործը կարելի է դիտարկել որպես Թուրքիայում «խորքային պետության» ցանցային մի բաղադրիչի չեզոքացում», *Վերլուծություններ*, 10/08/2013

<http://panorama.am/am/analytics/2013/08/10/ergenekon-case/>

ման գիծը ևս օբյեկտիվորեն պետք է թուլանար: Կարելի է ասել, որ ԵՄ-ն ԱԶԿ-ի ներքին քաղաքակա-նության մեջ կիրառվող ռազմավարություն էր: Արդյունքում՝ հզորացած քաղաքական իսլամը հանդիսանում էր ուղղակի սպառնալիք թուրք-խորայելական հարաբերությունների համար, սպառնալիք, որը կարող էր ի հայտ գալ Թուրքիայի ներքաղաքական փոփոխությունների արդյունքում⁴⁸:

Այսպիսով, երկու պետությունների ռազմատեխնիկական համագործակցությունն ուներ իր օբյեկտիվ խոչընդոտները և ընդունակ չէր հետագայում ծառայել որպես հիմք քաղաքական հարաբերությունների խորացմանը և այդ հարաբերություններին հաղորդել ռազմավարական համագործակցության բնույթ: Բնական էր, որ անվտանգության ոլորտի հրամայականները կնպաստեին միջնաժամկետ հեռանկարում կայուն գործընկերության պահպանմանը, սակայն արդեն ի վիճակի չէին լինի դրանք հասցնել դաշնակցայինի: Դրան չէին նպաստում ո՛չ քաղաքական պայմանները, ո՛չ էլ Թուրքիայում խորացող հակախորայելական տրամադրությունները, որոնք կուսակցության հեղինակության աճի համար օգտագործվում էին կառավարող ԱԶԿ-ի կողմից: Բացառությամբ զինվորական հրամանատարության և թուրքական քաղաքական վերնախավի որոշ հատվածի՝ Թուրքիայի բնակչությունը և հասարակության լայն շերտերը խիստ բացասաբար էին վերաբերվում Իսրայելի հետ համագործակցության հետագա որակական խորացմանը⁴⁹:

Սա, նաև, վերստին ապացուցում էր, որ Թուրքիան էր պատասխանատու Իսրայելի հետ հարաբերությունների դրական ու բացասական ընթացքի համար: Այդ Թուրքիայի ներքաղաքական և տարածաշրջանային հրամայականներն էին, որ ստիպում էին նրան վերանայել Իսրայելի հետ կապերը: Իսրայելում 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին ընտրված կառավարությունների

⁴⁸ Burris G. A., “Turkey-Israel: Speed Bumps,” *Middle East Quarterly*, Vol. 10, № 4, fall 2003, pp. 67-80. <http://www.meforum.org/569/turkey-israel-speed-bumps>

⁴⁹ Մինասյան Ս., «Իսրայելա-թուրքական ռազմավարական համագործակցության ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրների վրա», «21-րդ դար» N 2, 2004, էջ 14:

օրոք Թուրքիայի նկատմամբ քաղաքականությունը գրեթե նույն էր, համաձայն որի Թուրքիան հանդիսանում էր «ծայրամասային պետություն», և որի հետ դաշնակցելը միշտ էլ եղել է Իսրայելի արտաքին քաղաքական առաջնահերթություններից մեկը: Ինչպես Չնիկ Բիրն էր նշում, «շատ երկար ժամանակ Իսրայելը ցանկանում էր զարգացնել համագործակցությունը, իսկ Թուրքիան լռում էր: Իսրայելը դժկամ Թուրքիայի երկրպագուն էր»⁵⁰: Որպես «երկրպագու», Իսրայելը հաճախ այք էր փակում Թուրքիայի կողմից պաղեստինցիներին տրամադրվող օգնության վրա, աջակցություն ցույց տալիս Թուրքիային քրդական խնդրի ու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը կասեցնելուն առնչվող հարցերում: Երկար տարիներ այս հարցերը շարունակում էին մնալ աննշմար արգելքների հարաբերությունների համար, բայց դրանք կարող էին վերածվել մեծ արգելքների, եթե հարաբերությունները հարցականի տակ դրվեին հանրային մակարդակում⁵¹, ինչպես որ եղավ 21-րդ դարի սկզբին: Հենց այստեղ է, որ թուրք-իսրայելական հարաբերությունները խոցելի էին:

Երկկողմ հարաբերությունների ընթացքը որոշ առումներով կախված էր Մերձավոր Արևելքի քաղաքականության հիմնական «հեղինակ» հանդիսացող Վաշինգտոնից, որը պետք է վճռեր իր ընդհանուր տեսադաշտում այդ հարաբերությունների տեղը, թե՛ նախքան Իրաքի դեմ պատերազմելը, թե՛ հետսադդամհուսեյնյան Մերձավոր Արևելքում: 90-ական թթ. թուրք-իսրայելական համագործակցությունը ձևավորվել էր փոխադարձ շահերի հիման վրա, բայց ծածուկ կամ լուռ կերպով խրախուսվում էր ԱՄՆ կողմից: 21-րդ դարում փոխվել էր ԱՄՆ-ի նախկին մոտեցումներն իր երկու դաշնակից պետությունների՝ Թուրքիայի ու Իսրայելի հարցում: Սա կապված էր տարածաշրջանային նոր իրադրության հետ, որը

⁵⁰ Bir Ç., Sherman M., “Formula for Stability: Turkey Plus Israel,” *Middle East Quarterly*, fall 2002, p. 23.

⁵¹ Burreis G. A., “The Middle East-Turkey and Israel: The Turkish-Israeli Entente and Potential Mines in Its Path,” *An Online Journal of Political Commentary and Analysis*, Vol. 5, № 288, November 29, 2003.

<http://www.proconservative.net/pcvol5is288burrsturkeyisraelmeq.shtml>

հիմնականում առնչվում էր Իրաքի հետ, և որը ԱՄՆ-ին թելադրում էր որոշակի փոփոխություններ մտցնել և վերա-ձևավորել ուժերի հավասարակշռությունը: Մոտ ապագայում Իրաք ներխուժելու անհրաժեշտությունը Վաշինգտոնին ստիպում էր վերացնել այս նպատակին խոչընդոտող յուրաքանչյուր պատնեշ: Այս պայմաններում ԱՄՆ-ին ձեռնտու էր թուրք-սիրիական հարաբերությունների կարգավորումը, ինչի համար կային նպաստավոր պայմաններ՝ կապված այդ պետությունների ներքաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների հետ (Սիրիայում նախագահ էր դարձել Բաշար ալ-Ասադը, որը ավելի հանդուրժող քաղաքական գործիչ էր, իսկ Թուրքիայում իշխանության էին եկել իսլամամետները): 2002թ. հունիսի 19-ին Սիրիայի Գլխավոր շտաբի պետ գեներալ Հասան ալ-Թուրքումանիի առաջին պաշտոնական այցը Թուրքիա⁵², այնուհետև՝ 2002թ. նոյեմբերին, Թուրքիայի և Սիրիայի միջև արաբաթուրքական հարաբերությունների պատմության մեջ առաջին անգամ⁵³ ռազմական բնագավառում համագործակցության պայմանագրի ստորագրումը⁵⁴ երկկողմ կապերի վերանայման վառ դրսևորումներից էին: Կարծիք կար, որ այդ պայմանագրի ստորագրման մեջ ոչ պակաս կարևոր դեր է ունեցել ԱՄՆ-ի դիրքորոշումը, որը Իրաքում նախատեսվող գործողություններից առաջ շահագրգռված էր երկու պետություն-

⁵² Hürriyet Daily News, “Syrian Chief of Staff in Turkey, relations improving,” 6/20/2002, <http://www.hurriyetdailynews.com/syrian-chief-of-staff-in-turkey-relations-improving.aspx?pageID=438&n=syrian-chief-of-staff-in-turkey-relations-improving-2002-06-20>

⁵³ Բաղդադի պակտի շրջանակներում, թեև ռազմական ոլորտի համագործակցություն եղել էր Թուրքիայի ու Իրաքի միջև, դա պարտադիր էր կառույցի յուրաքանչյուր անդամի համար, և չէնք կարող դիտարկել որպես առանձին Թուրքիայի ու արաբական պետության միջև համագործակցություն ռազմական բնագավառում - (Ս. Ս.):

⁵⁴ Schenker D., “Syria and Turkey: Walking Arm in Arm down the Same Road?” *Jerusalem Center For Public Affairs*, Vol. 9, № 13, December 1, 2009. [138](http://jcpa.org/article/syria-and-turkey-walking-arm-in-arm-down-the-same-road/Տե՛ս նաև Zanotti J., “Turkey-U.S. Defense Cooperation: Prospects and Challenges,” <i>Congressional Research Service</i>, April 8, 2011, p. 34.</p>
</div>
<div data-bbox=)

ների միջև հարաբերությունների մերձեցման հարցում⁵⁵, և, հավանաբար, պակաս շահագրգռված թուրք-իսրայելական հարաբերությունների հեռանկարով: Հետագայում, եթե ԱՄՆ կառավարությունը թուրք-իսրայելական հարաբերություններին մեծ դեր հատկացներ, ապա երկկողմ կապերը, հավանաբար, կգարգանային, եթե ոչ, ապա վերոնշյալ արգելքները կարող էին նորից գլուխ քարձրացնել, և թուրք-իսրայելական համագործակցության ապագան կվերածվեր մերձավորարևելյան մեկ այլ անորոշության⁵⁶:

Այսպիսով, եթե 1990-ական թթ. թուրք-իսրայելական հարաբերությունների սերտացման համար առկա էին մի շարք նախապայմաններ ու դրդապատճառներ՝ իսլամական գործոն, քրդական հիմնախնդիր (նաև Սիրիայի կողմից PKK-ին ցուցաբերվող աջակցություն), ի հայտ եկած արաբաիսրայելական խաղաղության գործընթաց, նոր մարտահրավերներ, ԱՄՆ-ի ու ԵՄ-ի համար այս երկու պետությունների նվազող ռազմավարական նշանակությունը և այլն, ապա 90-ական թթ. վերջին և, հատկապես, նոր դարասկզբին, այս գործոնները գնալով ենթարկվում էին որակական նոր փոփոխությունների, ինչն ուղիղ համեմատական էր հարաբերությունների զարգացման դինամիկային: Հատկանշական է այն, որ երկկողմ հարաբերությունների համար որքան նվազում էին 90-ական թթ. առկա նախադրյալներն ու շարժառիթները՝ Թուրքիայի ու Սիրիայի միջև համաձայնագրի կնքումը 1998 թ. և դրանով նաև PKK-ի ու քրդական գործոնի հարաբերական դուրս մղվելը, 1998 թ. Սուբարաքի՝ Թուրքիա կատարած այցը, որը նոր փուլ հաղորդեց արաբաթուրքական հարաբերություններին⁵⁷, խաղաղության բանակցությունների ձախողումը Իսրայելի ու Սիրիայի միջև, 2000թ. պաղեստինյան ինթիֆադան, նոր դարասկզբին՝ Իրաքյան պատերազմի նախա-

⁵⁵Минасян С., “Стратегическое сотрудничество Израиля и Турции в контексте проблем региональной безопасности”, «21-րդ դար», № 2(4), Երևան 2004, с.103.

⁵⁶ Burris G. A., “Turkey-Israel: Speed Bumps,” *Middle East Quarterly*, Vol. 10, № 4, Fall 2003, pp. 67-80. <http://www.meforum.org/569/turkey-israel-speed-bumps>

⁵⁷ Bengio O., “The Turkish–Israeli relationship: Changing ties of Middle Eastern outsiders”, New York, 2004 p. 155.

շեմին, Թուրքիայի ռազմավարական նշանակության բարձրացումը ԱՄՆ-ի համար, 2002թ. նոյեմբերին Թուրքիայիում պահպանողական ԱԶԿ կուսակցության իշխանության գալը, 2002թ. վերջում Թուրքիայի համար ԵՄ-ին անդամակցելու նոր հնարավորությունների ի հայտ գալը⁵⁸, ինչպես նաև եվրոպական չափանիշներին համապատասխանելու համար Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում զինվորականության դերի նվազեցումը, 2003թ. նավթի գների բարձրացման արդյունքում ի հայտ եկած ճգնաժամը⁵⁹, որով, փաստացի, կարող էր վերադառնալ 1973թ. թուրք-իսրայելական հարաբերությունների համար հիմնական խոչընդոտ հանդիսացող «արաբական հզորության դարաշրջանը», և այլն, այնքան ավելի էին նկատվում հաճախակի սառեցումները երկկողմ հարաբերություններում: Բացի այդ, որոշակիորեն փոխվում էին Թուրքիայի ազգային շահերը, որոնցից բխում էր ամրացնել կապերը ԵՄ-ի հետ, մեծացնել ազդեցությունը տարածաշրջանում և ԱՄՆ-ի հետ հարաբերություններին չտալ նախկինի նման մեծ կարևորություն⁶⁰: Վերլուծելով այս գործոնների առկայությունը և ազդեցությունը թուրք-իսրայելական հարաբերությունների վրա՝ կարող ենք նշել, որ դրանք ուղղակի ազդեցություն ունեն երկկողմ կապերի խորացման և սառեցման հարցում: 90-ական թթ. հաստատեցին, որ այդ գործոնները բավականին բարենպաստ էին երկկողմ հարաբերությունների զարգացման համար, ինչը չէր կարելի ասել 2000-ական թթ. մասին:

⁵⁸Cagaptay S., “Kurds on the Way to Turkey: How Israel Can Prevent a Crisis in Its Relations with Ankara,” *Ha’aretz*, July 13, 2004.

⁵⁹Թեև կարծիք կար, որ 21-րդ դարում արաբական նավթի գործոնն այլևս ունակ չէր նախկինի նման ազդել Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա, քանի որ Անկարան այժմ ուներ այլընտրանք՝ ի դեմս Կասպիական նավթի (նախատեսում էր 2006 թ. ավարտի հասցնել Բաքու-Ջեյհան նավթամուղը): St’ u Inbar E., “The Resilience of Israeli-Turkish Relations,” *Israel Affairs*, Vol.11, № 4, October 2005, pp. 595-596; Murinson A., “Azerbaijan-Turkey-Israel Relations: The Energy Factor,” *Middle East Review of International Affairs*, Vol. 12, № 3, September 2008, pp. 47-58.

⁶⁰ Fuller G., “Turkey’s Strategic Model: Myths and Realities,” *The Washington Quarterly*, Vol.27, № 3, summer 2004, p. 63.

The Turkish-Israeli Relations in the Context of Regional and Domestic Factors (2000-2002)

Aleksandr Sahakyan

YSU, Chair of Arabic Studies

In the 1990s, relations between Turkey and Israel greatly expanded and reached an unprecedented degree of closeness. The Turkey-Israel entente has become an important element in the politics of the Middle East and eastern Mediterranean areas. But the second intifada between the Palestinians and Israel, which erupted in September 2000, provided an important test of the strength of Turkish-Israeli relations and of Ankara's ability to draw a clear line between its common strategic interests with Israel and its emotional identification with the Palestinians. In October 2000, Turkey voted in favor of a U.N. resolution condemning Israel for using excessive force against the Palestinians, and later that month, President Ahmet Sezer harshly denounced Israel at an Islamic economic conference in Istanbul. Another test for Turkish-Israeli relations was the fact that in late 2002, the Justice and Development Party gained control of Parliament. Although the AK has not been as vocal as Refah in its condemnation of Israel, many of its leaders have not hidden their criticism of Israel's policies. Turkish Parliament passed a set of reforms limiting the power of the National Security Council, the principal lever of the military in politics. In other words empowered political Islam was an endemic threat to Turkish-Israeli relations, a threat that could surface as a result of shifts in Turkish domestic politics.